ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

2012 թվականի գործունեության

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն

I. Նախաբան 3
II. Կառավարում և վարչարարություն 4
III.ՆՊԱՏԱԿ 1. Մասնագիտությունների կրթական ծրագրեր 5
IV.ՆՊԱՏԱԿ 2. Որակի ապահովում 8
V.ՆՊԱՏԱԿ 3. Հետազոտական ոլորտի զարգացում 9
VI.ՆՊԱՏԱԿ 4. Միջազգային կապեր 9
VII.ՆՊԱՏԱԿ 5. Հասարակայնության հետ կապեր 13
VIII.Հակակոռուպցիոն միջոցառումներ 14
IX.Ֆինանսական հաշվետվություն 15
X.Եզրափակիչ դրույթներ 16

I. Նախաբան

Երևանի գեղարվեստի պետական ակադեմիան (այսուհետ՝ ԵԳՊԱ) սույն փաստաթղթով ներկայացնում է 2012 թվականի իր գործունեության և ֆինանսական համառոտ հաշվետվությունը:

Սույն հաշվետվությունով բնութագրված տարին եղել է բեկումնային ՀՀ մասնագիտական կրթության համար, քանի որ ՀՀ կառավարության կողմից նախաձեռնվել են մի շարք գործողություններ, որոնք միտված էին ՀՀ մասնագիտական կրթության ոլորտի ինտեգրմանը Բարձրագույն կրթության եվրոպական տարածքին: Այդ զարգացումների հետ համահունչ ԵԳՊԱ-ն նախաձեռնել է գործողությունների մի շարք, որոնք նպաստում են բարեփոխումների իրականացմանը, ինչպես նաև կարգավորում են ԵԳՊԱ-ի արդյունավետ գործունեությունը: Այդ գործողությունները ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝

- ռազմավարական նոր պլանի մշակում, հաստատում և համապատասխան գործողությունների նախաձեռնում,
- որակավորումների խոշորացմանը միտված միջոցառումներ,
- հակակոռուպցիոն միջոցառումների նախագծի մշակում, հաստատում և կիրառում,
- ուսանողների կարիերայի ծառայությունների ձևավորում՝ ուսանողների մասնագիտական կողմնորոշմանը նպաստելու համար,
- որակի ապահովման նոր մեխանիզմների մշակում և կիրառում, ինչպես նաև ինքնավերլուծության առաջին փուլի նախաձեռնում,
- ԵԳՊԱ-ի կառուցվածքային և վարչական աշխատանքների վերանայում,
- ԵԳՊԱ-ի կառավարման տեղեկատվական համակարգի մշակման ձեռնարկում և այլն:

Վերը նշված նախաձեռնությունները հաջողությամբ և արդյունավետ իրականացնելու համար վերանայվել, հաստատվել և կիրառվում են ԵԳՊԱ-ի նոր կառուցվածքը, աշխատանքային նկարագրությունները և վարչական աշխատանքները կարգավորող համապատասխան այլ փաստաթղթեր:

2012 թվականը կարելի է բնութագրել ԵԳՊԱ-ի համար զգալի փոփոխությունների տարի, քանզի հիմնավոր քայլեր են ձեռնարկվել ԵԳՊԱ-ում կառավարման նոր մոտեցումների և որակի մշակույթի ձևավորման գործում:

Տվյալ փաստաթուղթը ներկայացնում է ԵԳՊԱ-ի գործողությունները և ֆինանսական հաշվետվությունը ըստ 2012 թվականի ռազմավարական նոր պլանի:

II. Կառավարում և վարչարարություն

2012 թվականը զգալի փոփոխությունների տարի էր ԵԳՊԱ-ի համար: ՀՀ բարձրագույն կրթության (ԲԿ) ոլորտում տեղի ունեցող բարեխոխումների հետ համահունչ շարժվելու նպատակով ԵԳՊԱ-ն կարևորեց բուհի կառավարման և վարչարարության ոլորտում շոշափելի աշխատանքների իրականացումը: Սույն թվականի հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին հրավիրվեց արտաքին աուդիտ վարչական, ինչպես նաև ուսումնական գործընթացի աշխատանքների գնահատման համար: Հիմք ընդունելով աուդիտի արդյունքները, վերանայվեց ԵԳՊԱ-ի կառուցվածքը և մշակվեցին աշխատանքային նկարագրերի նոր տարբերակներ, որոնք, համահունչ մնալով ԵԳՊԱ կանոնադրությանը և ՀՀ ԲԿ մասին օրենքին, ներառում են ԲԿ համակարգում բարեփոխումներից բխող պահանջները:

Այսպիսով.

- վերանայվեցին բաժինների և ստորաբաժանմունքների կարգավիճակները: Նոր կառուցվածքով գործում է ուսումնական նոր վարչություն, որը հիմանկանում զբաղվում է Մասնագիտության կրթական ծրագրերի (ՄԿԾ) իրականացումով և բարելավումով, ինչպես նաև ուսանողների գնահատականների և շարժի հետ կապված բոլոր տվյալների հաշվառումով:
- Օպտիմալացման նպատակով միավորվեցին երկու ամբիոններ՝
    - գրաֆիկայի և գծանկարի,
    - հումանիտար առարկաների ամբիոնը միավորվեց կերպարվեստի պատմության և տեսության ամբիոնին:
- Նախագծման փուլում է գտնվում ուսանողների մասնագիտական կողմնորոշմանը, ինչպես նաև տեղեկատվական կառավարմանը միտված ծառայությունների տրամադրումը:

- Տնտեսական գծով պրոռեկտորի պաշտոնը վերանվանվեց Ֆինանսատնտեսական գծով պրոռեկտորի, որի արդյունքում հաշվապահության բաժինը տեղափոխվեց ֆինանսատնտեսական գծով պրոռեկտորի ենթակայության տակ:
- Նշանակվեց աշխատակազմի ղեկավար՝ ներքին աշխատանքները արդյունավետ և համահունչ կազմակերպելու համար:
- Փոփոխությունների շարքում է նաև ԵԳՊԱ-ի դրույքաչափերի սահմանումը և հաստատումը:

Թվարկված աշխատանքները կարելի է համարել որպես նախապատրաստական փուլ՝ 2013 թվականի բարեփոխումների նոր փուլ անցնելու համար:

III. ՆՊԱՏԱԿ 1.Մասնագիտությունների կրթական ծրագրեր

ա. Ուսանողների վիճակագրական տվյալներ

Ավագ դպրոցի գաղափարի կիրառման արդյունքում ՀՀ միջնակարգ մասնագիտական օղակը չտվեց շրջանավարտ 2011 թվականին, ինչն էլ իր հերթին առաջ բերեց դիմորդների սակավություն: Ինչպես երևում է ստորև բերված գրաֆիկներից, ընդհանուր առմամբ բակալավրի մակարդակում նկատվում է ուսանողների թվի նվազեցում, թե' մայր բուհում և թե'մասնաճյուղերում, ինչը պարտավորեցնում է լուրջ քայլեր ձեռնարկել նոր ուսանողներ ներգրավելու համար: Սակայն պատկերը այլ է մագիստրատուրայի մակարդակում, որտեղ տարիների ընթացքում զգացվում է կայուն աճ: Ընդ որում, այդ աճը պայմանավորված է այլ բուհերից ուսանողների տեղափոխությամբ, ինչը վկայում է ԵԳՊԱ-ի գրավչությունը գեղարվեստի ոլորտում: Ասպիրանտուրայի մակարդակում գրանցվել է կայուն կարգավիճակ, սակայն լուրջ քայլեր պետք է ձեռնարկվեն այն ավելի գրավիչ դարձնելու համար: Ընդհանուր առմամբ ԵԳՊԱ մայր բուհի ուսանողների թիվը կազմում է 732:



Գյումրու մասնաճյուղում 2012-13ուս. տարվա ընդունելությունները մասնավորապես հավասարակշռեցին ստեղծված իրավիճակը, սակայն ուսանողների քանակը չվերականգնվեց ամբողջապես:



Եթե 2010- 11 ուս. տարում Գյումրու մասնաճյուղում սովորում էին՝ պետ. պատվերով 23 ուսանող, վճարովի 135 ուսանող, ինչը ընդհանուր թվով կազմում է 158 ուսանող, ապա արդեն 2012-13 ուս. տարում գրեթե վիճակը վերականգնվել է: Տվյալ երևույթը պայմանավորված է ՀՀ կրթության նախարարության կողմից տրամադրված անվճար տեղերի գրավչականությամբ, որի ավելացումը իր հերթին նպաստում է դիմորդների հնարավորությունների բարելավմանը և խթանում դիմորդների ակտիվությունը:

Դիլիջանի մասնաճյուղում 2012-13 ուս. տարվա համար ընդունվել են բակալավրի ծրագրով 9 ուսանող:



Դիլիջանի մասնաճյուղում ուսանողների թիվը ընդհանուր կազմում է 28:

բ. Ուսանողների ուսումնաարտադրական պրակտիկայի կազմակերպում

ԵԳՊԱ-ն հիմնականում սեփական միջոցներով է կազմակերպել է ուսանողների ուսումնաարտադրական պրակտիկան՝ ուսանողներին տեղավորելով ԵԳՊԱ-ի լաբորատորիաներում, ինչպես նաև, ըստ պայմանագրերի՝ շուկայում գոյություն ունեցող համապատասխան կազմակերպություններում:





Այսպիսով, ԵԳՊԱ և Դիլիջանի մասնաճյուղի ուսանողներ ուսումնաարտադրական պրակտիկան մեծ մասամբ կազմակերպվել են այլ կազմակերպություններում (427 ուսանող), 16%-ը (85 ուսանող) պրակտիկան իրականացրել է ԵԳՊԱ- ի լաբորատորիաներում, իսկ 3%-ը (13 ուսանող) ունեցել է ազատ պրակտիկա: Ինչ վերաբերվում է Գյումրու մասնաճյուղին, ապա ուսանողների 54%-ը (51 ուսանող) պրակտիկան անցկացրել է ԵԳՊԱ լաբորատորիաներում, իսկ 46%-ը (44 ուսանող՝) այլ կազմակերպություններում:

Այս տվյալների հիման վրա կարելի է եզրակացնել, որ ԵԳՊԱ-ն կարողանում է սեփական միջոցներով կազմակերպել 22% (136 ուսանող) ուսանողների պրակտիկան (ներառյալ Դիլիջանի և Գյումրու մասնաճյուղերի ուսանողները):

բ. Որակավորումներ

Սույն տարվա ընթացքում ՀՀ ԿԳՆ կողմից նախաձեռնվել է որակավորումների խոշորացում, որին ԵԳՊԱ-ն ներկայացրել է իր առաջարկները: Ավելին, Որակավորումների ազգային շրջանակին (ՈԱՇ) արձագանքելու համար ԵԳՊԱ-ում ստեղծվեց մասնագիտությունների կրթական ծրագրերը վերանայող հանձնաժողով, որը զբաղվում է ուսումնառության վերջնարդյունքների մշակմամբ, ինչը ենթադրում է ՄԿԾ-ների վերանայումը և շուկայի պահանջներին համապատասխանեցումը: Այդպիսի մոտեցումը կերաշխավորի ԵԳՊԱ-ի և մասնաճյուղերի կողմից առաջարկվող մասնագիտությունների ուսումնառության վերջնարդյունքների համահնչությունը ՈԱՇ-ի հետ, ինչը կհեշտացնի Բարձրագույն կրթության Եվրոպական տարածքի ինտեգրումը: Նախատեսվում է ՄԿԾ-ների կառավարման նոր մոտեցումների ինտեգրում՝ միասնական և կրկնակի աստիճանների շնորհման համար:

IV. ՆՊԱՏԱԿ 2. Որակի ապահովում

Որակի ապահովման մշակույթի ձևավորման գործում ԵԳՊԱ-ն թևակոխեց մի նոր փուլ, որը բնութագրվում է ինքնավերլուծության առաջին փուլով: Վերանայվեց որակի ապահովման համակարգը, հետևաբար ձևավորվեցին ոլորտային հանձնաժողովներ, որոնք նախաձեռնեցին ինքնագնահատման գործընթացը: Զուգահեռաբար վերանայման փուլում է գտնվում որակի ապահովման ներքին համակարգը կարգավորող քաղաքականությունը և ընթացակարգերը: Որակի ապահովման գործառույթների հստակեցման աշխատանքները կատարվում են ԵԳՊԱ-ի կառավարման համակարգի փոփոխությունների հետ զուգահեռ:

DIUSAS ծրագրի շրջանակներում ԵԳՊԱ-ն կատարել է Եվրոպական չափանիշների և ուղենիշների VII-րդ չափորոշչի մանրամասն մշակում և կատարել է առաջին ինքնավերլուծություն, որը ներկայացվել է 28.09.2012թ. ծրագրի եզրափակիչ համաժողովին:

Համաշխարհային բանկի օժանդակության ծրագրի շրջանակներում, ԵԳՊԱ-ն դիմեց դրամաշնորհային ծրագրին և հաջողությամբ իրականացնում է հետևյալ գործողությունները ինչպես մայր բուհում, այնպես էլ Դիլիջանի և Գյումրու մասնաճյուղերում՝

- որակի ապահովման նոր հայեցակարգի մշակում հիմք ընդունելով որակի ապահովման ոլորտում տեղի ունեցած վերջին զարգացումները,
- ռեսուրսների ձեռքբերում,
- անձնակազմի վերապատրաստում և այլն:

Վերոնշյալ գործողությունները կստեղծեն բարենպաստ պայմաններ որակի ապահովման մշակույթի ձևավորմանը, ինչը թույլ կտա 2013 թվականին դիմել Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը նախաձեռնելու համար: Պլանավորվում է որակի ապահովման համացանցի ստեղծում, որը կներառի ԵԳՊԱ-ի Գյումրու և Դիլիջանի մասնաճյուղերը:

V. ՆՊԱՏԱԿ 3. Հետազոտական ոլորտի զարգացում

Հետազոտության ոլորտում կատարվել են որոշ աշխատանքներ, որոնց իրականացման վերլուծությունը հիմքեր է տրամադրում ԵԳՊԱ-ի մոտեցումների վերանայման համար, որը նախաձեռնման փուլում է: Այսպիսով, 2012-2013 ուսումնական տարվանից բոլոր մասնագիտությունների գծով մագիստրոսական կրթական ծրագրերում ներառվել է հետազոտական կարողությունները ձևավորող համապատասխան դասընթացներ:

14.11.2012թ. գիտական խորհրդի նիստում հաստավել է նոր մշակված հետբուհական «Հետազոտողի ուսումնական պլանը»:

Ամեն տարի հրատարակվում է դասախոսների և ասպիրանտների գիտական աշխատությունների «Տարեգիրք» ժողովածուն: Հերթական ժողովածուի նյութերը, գիտական խորհրդի երաշխավորությամբ ,հանձնվել են տպագրության:

Համագործակցության սերտ կապեր են ստեղծվել ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի և ԵԳՊԱ-ի միջև: Այդ կապերը նպաստում են երկու կողմերի մասնագետների համագործակցությանը և նորանոր մշակումների նախաձեռնմանը: Լավագույն օրինակներից է համատեղ գիտաժողովների կազմակերպումը, ինչպես նաև ասպիրանտների թեկնածուական ատենախոսությունների պաշտպանությունը ՀՀ ԳԱԱ Արվեստի

ինստիտուտում: Ներկայումս ակադեմիայում սովորում են 13 ասպիրանտ, որոնցից 5-ը արտասահանցիներ են:

2012 թ. ընթացքում ՀՀ ԲՈՀ-ի կողմից ակադեմիայի 1 դասախոսի շնորհվել է պրոֆեսորի, 5 դասախոսի՝ դոցենտի գիտական կոչում:

VI. ՆՊԱՏԱԿ 4. Միջազգային կապեր

ԵԳՊԱ-ն միջազգային հարաբերությունների ուղղությամբ ծավալել է աշխատանքներ հետևյալ ուղղություններով, որոնք միտված էին ռազմավարական ուղղությունների իրականացմանը՝

- ուսանողների շարժունությունը ապահովող ծառայությունների տրամադրում,
- պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստում,
- միջազգային համագործակցություն այլ կազմակերպությունների և բուհերի հետ,
- միջազգային ծրագրերի իրականացում,
- միջազգային հարաբերությունների բաժնի անդամների մասնագիտական զարգացում,
- ԵԳՊԱ-ի մասնակցությունը տարբեր ցուցահանդեսներում, արվեստի հետ կապված այլ միջոցառումներում:

Ուսանողների շարժունությունը ապահովելու նպատակով մշակվել են համապատասխան գործիքներ, ինչպիսիք են եռակողմ պայմանագիր, ինչպես նաև ուսանողի ուղեցույց արտերկրում ուսմանը ծանոթանալու համար:

Համեմատած նախորդ տարիների հետ նկատվում է դիմորդների հոսքի նվազում: Իրանի Իսլամական Հանրապետության ուսանողների ֆինանսական խնդիրների պատճառով նկատվում է դիմորդների զգալի նվազում, ինչի հետևանքով էլ արդեն 5 ուսանող (ԻԻՀ քաղաքացի) հրաժարվել է ուսումը շարունակելուց: Արտասահմանցի ուսանողներիի հոսքը ապահովելու համար անհրաժեշտ է օտար լեզուներով դասընթացների կազմակերպում:

Ընդհանուր առմամբ, արտասահմանցի ուսանողների տոկոսը 2012-13 ուս. տարվա համար կազմում է 12 %, որից 7%-ը Ասիայից, 4%-ը ԱՊՀ երկրներից, 1%-ը Եվրոպայից:



Ինչ վերաբերվում է արտասահման մեկնող ուսանողներին, հիմնականում ուսանողների փոխանակումն ընթանում է Ֆրանսիական հաստատությունների /Մարսելի գեղարվեստի բարձրագույն դպրոց, Ռեյմսի դիզայնի և արվեստի բարձրագույն դպրոց, Լիոն քաղաքի գեղարվեստի ազգային դպրոց/ հետ առկա ուսանողների փոխանակման ծրագրի շրջանակներում և ըստ այդմ՝ 2012-13 ուս. տարում նշված համաձայնագրերի շրջանակներում ուսումը շարունակելու է մեկնել ուսանողական համակազմի 0.3%-ը Ֆրանսիա, իսկ 0.2%-ը Ռուսաստան /Սանկտ-Պետերբուրգի Բուրգանով կենտրոնի կողմից կազմակերպված սիմպոզիումին,Սանկտ–Պետերբուրգի Շտիգլիցի անվան պետական գեղարվեստա-արդյունաբերական ակադեմիա/:

Միջազգային համագործակցությանը նպաստելու նպատակով ընդհանուր առմամբ կնքվել են պայմանագրեր 13 արվեստի բարձրագույն ուսումնական օտարերկրյա հաստատությունների հետ, որոնք վերաբերվում են պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների փոխանակմանը, համատեղ թեմատիկ ցուցահանդեսների, կոնֆերանսների, աշխատաժողովների կազմակերպմանը: Հիմնականում համգործակցությունը տեղի է ունենում Ֆրանսիայի, Չեխիայի, Իտալիայի, Գերմանիայի և ԱՊՀ երկրների հետ:

ԵԳՊԱ-ն ակտիվ մասնակցություն է ցուցաբերում Եվրամիության կողմից իրականացվող Տեմպուս ծրագրերին.

- հաջողությամբ ավարտին է հասել DIUS ծրագիրը, որի շրջանակներում հիմնվեց Որակի ապահովման կենտրոնը, մշակվեցին որակի ապահովման որոշ մեխանիզմներ և վերապատրաստվեց անձնակազմը:
- HESDeSPI ծրագիրը միտված է Բարձրագույն կրթության համակարգի մշակում՝ սոցիալական գործընկերության բարելավման և հումանիտար գիտությունների մրցունակության համար /Higher Education System Development for Social Partnership Improvement and Humanity Sciences Competitiveness/մեկնարկել է 2010թ., որի

շրջանակներում ԵԳՊԱ-ում 2011-12 ուս. տարվանից Կերպարվեստի պատմություն և տեսություն մասնագիտության համար մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսումնական պլանում ներմուծվել և դասավանդվում է **«Արվեստի կառավարում»** առարկան: Ծրագիրը նախատեսված է բարելավելու սոցիալական գործընկերությունը և խթանելու հումանիտար գիտությունների մրցունակությունը:

- HEN-GEAR ծրագիրը մեկնարկել է սույն թվականի հոկտեմբերի 15 և TEMPUS-ի այս ծրագիրը միտված է հնարավորություն տալ հայ գործընկերներին ստեղծել տեղական ազգային տվյալների բազայի համակարգ: Նրա նպատակն է ամրապնդել համապատասխանությունը բարձրագույն կրթության և աշխատաշուկայի պահանջների միջև ողջ բարձրագույն կրթության համակարգի արդյունավետությունը բարձացնելու նպատակով, համաձայն հավատարմագրած որակի ապահովման համակարգի՝ ուսումնասիրելով բարձրագույն կրթության ծրագրերը և շրջանավարտների նվաճումները:

Մասնագիտական զարգացման ուղղությամբ իրականացվել են մի շարք գործողություններ.

- անգլերենի դասընթացներ՝ վերապատրաստվել են մոտ 15 դասախոս և վարչակազմի աշխատակիցներ,
- փորձի փոխանակում և համագործակցության կապերի հաստատում Ֆլորենցիայի գեղարվեստի ակադեմիայի մասնագետների հետ,
- ակտիվ մասնակցություն տարբեր միջազգային միջոցառումներին, ինչպիսիք են Եվրոպայի օր, Տեմպուսի, Էրազմուս մունդուս ծրագրերի, միջոցառումների և այլն:

Միջազգային մակարդակովԵԳՊԱ-նմասնակցել է տարբեր ցուցահանդեսների և արվեստի հետ կապված այլ միջոցառումների.

- մասնակցություն Մոսկվայում-Բուրգանով կենտրոն տուն-թանգարանում անցկացվող քանդակների սիմպոզիում-աշխատաժողովին,
- մասնակցություն աշխարհահռչակ *Թաթեռության-Լոնդոն ընկերության* կազմակերպած մրցույթին, որտեղ «Զարդերի լավագույն դիզայն» անվանակարգում հաղթող ճանաչվեցին ԵԳՊԱ-ի երկու ուսանողներ՝ տղամարդու և կանացի զարդերի դիզայնի համար: Հաղթած ուսանողները ստացան դրամական պարգև և ճանաչվելու հնարավորություն: Սա նաև ԵԳՊԱ ուսանողների համար մեծ ստեղծագործական և

աշխատանքային փորձառություն հանդիսացավ, որը կարող է վճռորոշ դեր խաղալ իրենց կարիերայի ձևավորման և հետագա գործունեության համար,

- մասնակցություն **«Հայոց խաչքարեր»** նախագծին, որը իրականացվում է ճապոնացի պրոֆեսոր Կունիտո Նագաոկայի հետ համատեղ և ընթանալու է մինչև 2016թ.: Նախագծի շրջանակներում աշխատաժողովի կազմակերպում ԵԳՊԱ ուսանողների համար: Արդյունքում մի խումբ ԵԳՊԱ ուսանողներ ականատես եղան ճապոնացի գիտնականի կիրառած TAKU-HON տեխնիկայով Էջմիածնի գանձարանի խաչքարերի սիմվոլների պատճենահանմանը:
- **«Տաշիր» հիմնադրամի** կողմից հատկացվող միանվագ դրամական աջակցություն ստացան Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի բարձր առաջադիմություն ունեցող Ջավախքի 7 ուսանող:
- ՀՀ-ում Իտալիայի դեսպանատան կողմից, Միլանի Դիզայնի Եվրոպական ինստիտուտի դասախոս, պրոֆեսոր և միջազգային բաժնի պատասխանատու Անտոնիո Վենեչեն ԵԳՊԱ-ում անցկացրեց դասընթաց, որին մասնակցեց դիզայնի և կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողադասախոսական կազմը, որի նպատակն էր տեղեկատվություն տրամադրել վերը նշված հաստատության գործունեության մասին: ԵԳՊԱ-ի ուսանողներին այն տվեց տեքստիլ դիզայնի հետ կապված ստեղծագործական նորարարական մոտեցումներ մոդելավորման ոլորտում:

VII. ՆՊԱՏԱԿ 5. Հասարակայնության հետ կապեր

Հասարակայնության հետ կապերը կարելի է համարել մի ոլորտ, որը հետագա լուրջ աշխատանքների կարիքն ունի: Ներկայումս, ԵԳՊԱ-ն ԵՊՀ-ի հետ միատեղ իրականացնում է մասնագիտական վերապատրաստումներ քաղծառայողների համար: 2012 թվականին վերապատրաստում են անցել 12 քաղծառայող:

Կան որոշ աշխատանքներ բարեգործական բնույթի կամ այլ ծառայությունների հետ, որոնք կապ չունեն ուսումնական գործընթացի և հետազոտության հետ:

Բուհում, ինչպես նաև մասնաճյուղերում, իրականացվել են տասներկու ցուցահանդես, որոնցից՝ չորս անհատական ցուցահանդես և հագուստի մոդելավորման երկու ցուցադրություն: Ցուցանահանդեսները կազմակերպվել են ինչպես բուհի ցուցասրահում, այնպես էլ համայնքի մշակութային կենտրոններում:

VIII. Հակակոռուպցիոն միջոցառումներ

Հիմք ընդունելով 2009-2013 թթ. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և իրականացման ծրագիրը ԵԳՊԱ-ն մշակել և ներկայումս իրականացնում է հակակոռուպցիոն միջոցառումների ցանկը, որը միտված է կոռուպցիայի դեմ անհանդուրժողական միջավայրի ստեղծմանը:

Միջոցառումների ծրագիրը միտված է ԵԳՊԱ-ի գործառույթների և հատկապես հակակոռուպցիոն ծրագրերի և միջոցառումների վերաբերյալ թափանցիկության ապահովմանը և այն պարզաբանում է ԵԳՊԱ-ի կողմից որդեգրած նոր մոտեցումները այդ խնդիրները լուծելու համար: Այդ ծրագրի շրջանակներում ԵԳՊԱ-ն որդեգրել է այնպիսի մոտեցումներ, որոնք

- կկանխարգելեն կոռուպցիայի ցանկացած տեսակի դրսևորում,
- կնպաստեն կոռուպցիայի ցանկացած տեսակի բացահայտմանը,
- կսահմանի կոռուպցիայի պատճառները վեր հանելու պարզ և արդյունավետ ուղղիները:

Հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրի թիրախում գտնվում են հետևյալ ոլորտները, որոնք համարվում են առավել խոցելի կոռուպցիայի արտահայտման համար՝

- ընդունելության, ավարտական և միջանկյալ քննություններ,
- ուսումնական մասի գործողություններ,
    1. ուսանողների հեռացման, փոխանակման, շարժունության և վերականգման հետ կապված խնդիրներ,
    2. ուսանողների գնահատման հետ կապված խնդիրներ,
- աշխատատեղերի համալրման խնդիրներ և աշխատանքային այլ հարաբերություններ,
- ֆինանսատնտեսական հարցերի հետ կապված խնդիրներ, ինչպիսիք են՝ գնումները և ֆինանսական այլ գործողությունները:

Միջոցառումների հակակոռուպցիոն ծրագիրը որդեգրվել է 2012 թվականի նոյեմբերի 19-ին և գործողությունների իրականացումը կարելի է բնութագրել արդյունավետ: Միջոցառումների սույն ցանկը տարածվում է նաև Գյումրու և Դիլիջանի մասնաճյուղերի վրա:

IX. Ֆինանսական հաշվետվություն

2012 թվականին ԵԳՊԱ-ի եկամուտները ձևավորվել են պետ. բյուջեի հատկացումներից (մոտավորապես 33 %) և ուսանողների վճարներից: ԵԳՊԱ ծախսերը կատարվում են ըստ կազմած նախահաշվի, որը կազմվում է հիմք ընդունելով ամբիոններից ստացած պահանջագրերից: Հատուկ տողով գումար է հատկացվում ուսանողական ցուցահանդեսների կազմակերպմանը: 2012 թվականից պրոֆեսորա-դասախոսական կազմին վճարվում է հավելավճարներ ըստ կոչումների: Բժշկական ապահովագրություն ունեցող բոլոր աշխատակիցների համար ակադեմիան վճարվում է ապահովագրական գումարի 60%-ը:

Մուտքեր



Ծախսեր



Աշխատավարձ	372.210.000
Պետական հարկեր	2.717.000
Գնումներ	15.114.000
Ծառայություններ	53.220.000
Գործուղում	2.253.000
Կրթաթոշակ	14.525.000
Այլ ծախսեր	1.268.000

Ուսումնական գործընթացի արդյունավետությունը ապահովելու համար 2012 թվականին ԵԳՊԱ-ի առաջին և երկրորդ մասնաշենքերում կատարվել է 21 573 757 դրամի

ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, ԵԳՊԱ-ն համալրվել է ուսումնական գույքով, ձեռք են բերվել սարքեր և սարքավորումներ, գրադարանը հագեցվել է մասնագիտական գրականությամբ:

Գյումրու մասնաճյուղի ֆինանսատնտեսական գործառությունները վարվում են տարեկան պլանավորման՝ ըստ անհրաժեշտ, օգտակար և այլ ծախսերի: Այդ թվում անհրաժեշտ ծախսեր են աշխատավարձերը և սոցիալական պարտավորությունները պետության և աշխատակիցների հանդեպ, ինչը կազմում է ընդհանուր բյուջեի 84 %-ը, նաև պահանջվող գրասենյակային պարագաներ, կոմունալ ծախսերի հատվածները: Առանձին կետով վճարվում են գույքի և սարքավորումների, տրանսպորտային, գործուղումների, ընթացիկ վերանորոգումների համար: Այս ամենը վկայում են, որ մասնաճյուղը իր ունեցած միջոցները ծախսում է դինամիկ համամասնությամբ, չնայած չի կարողանում իրականացնել զարգացման և հեռանկարային ծախսեր: Այս կարգի ծախսերի համար բուհը նախատեսում է ընդլայնել ու զարգացնել համագործակցական հովանավորչական և դրամաշնորհային ծրագրերն ու նախագծերը:

X. Եզրափակիչ դրույթներ

ՀՀ մասնագիտական կրթության ոլորտի ինտեգրումը Եվրոպական Բարձրագույն կրթության տարածքին կարևոր և նշանակալի ազդեցություն կունենա ԵԳՊԱ-ի արդյունավետ գործունեության վրա:

Ռազմավարական նոր պլանի լրամշակումը՝ կարիքների վերլուծության հիման վրա, ինչպես նաև նրա հաստատումը, ուսանողների կարիերայի կենտրոնի ձևավորումը, հակակոռուպցիոն միջոցառումների նախագծի մշակումը, հաստատումը և կիրառումը, նաև այլ նախաձեռնությունների իրականացումը, թույլ կտան ԵԳՊԱ-ն դարձնել մրցունակ և յուրօրինակ հաստատություն, ինչպես ՀՀ-ում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: